

տեսակներին բնորոշ են աճողական դրույքաչափերը, այստեղ խնդիրն այն է, թե ինչ չափանիշներով պետք է տարրերակել անձանց խմբերը: Ըստ Եռյան, հարկերը կարող են լինել կամ պրոգրեսիվ, եթե հարկման ծանրությունն աճում է ավելի խոշոր եկամուտների և ունեցվածքի համար, կամ ուղղակիվ, եթե իրենց հիմնական ծանրությամբ հարկերն ընկնում են ավելի փոքր եկամուտներ ունեցողների վրա:

Ամերիկյան տնտեսագետ Պ. Սամուելսոնը իր «Տնտեսագիտություն» գրքում արդյունավետ հարկման հիմքում ընկած բազմաթիվ սկզբունքներից առանձնացնում է ըստ ստացված օգուտների և վճարունակության սկզբունքը: Նա գտնում է, որ «Հարկերի կառուցվածքը պետք է այնպիսին լինի, որ եկամուտները շուկայական համակարգի միջոցով և համապատասխան ձևով բաշխվեն ի շահ հասարակության»<sup>1</sup>: Քանի որ, «ըստ վճարունակության» հարկման սկզբունքի կիրառման ժամանակ առկա է այն խնդիրը, որ չկա հարկեր վճարելու որևէ մեկի հնարավորությունները չափող գիտական մոտեցում, ուստի այդ մասին Սամուելսոնը գրում է. «Պրակտիկայում այս հարցի պատասխանը կառուցվում է կանխատեսումների և գուշակումների վրա՝ կախված հարկման հիմնախնդրի նկատմամբ դեկավարող կուսակցության հայացքներից, պահի և եկամուտների նկատմամբ կառավարության պահանջներից»<sup>2</sup>: Հարկման վերը նշված երկու տեսություններն ընկած են գրեթե բոլոր երկրներում իրականացվող հարկային քաղաքականությունների հիմքում:

Ինչկանակ, հարկային համակարգերի վերաբերյալ տարրեր ժամանակաշրջանների տնտեսագետների ուսումնասիրություններից երեսում է, որ հարկերի՝ որպես տնտեսական կատեգորիայի օբյեկտիվ գոյության ու անհրաժեշտության հարցում բոլորը համախոհներ են, տարածայնությունները վերաբերել են միայն տնտեսության մեջ հարկերի ունեցած դերին, իսկ արդարացի հարկագանձման սկզբունքների որոնումը երբեք չի դադարել հրատապ լինելուց:

## ՄԱՆՈՒԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՊԱՀ ասպիրանտ

### ԳՅՈՒՂԱՏՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ցանկացած երկրի տնտեսական գարգացման գործընթացում իր ուրույն տեղն ունի գյուղատնտեսությունն իր բոլոր ենթակառուցվածքներով: Գյուղատնտեսությունը և առհասարակ ազդապարենային համալիրը (ԱՊՀ) ցանկացած պետության տնտեսության ռազմավարական ճյուղերից մեկն է, և այստեղ կան մի շարք առանձնահատկություններ, որոնք հատուկ ուշադրության են արժանի այս ոլորտի վարկավորման համակարգն ուսումնասիրելու համար: Մասնավորապես Հայաստանի Հանրապետության պարագայում, եթե «...սկսած ԽՍՀՄ ժամանակներից՝ ազրորիզները և ազրարդյունաբերությունը եղել են Հայաստանի տնտեսության կարևորագույն ու արդյունավետ ճյուղերից: Նրանք այսօր նույնպես նպաստում են գյուղական բնակչության զրադարձությանը ու աղբյուր են հանդիսանում գյուղական տարածքներում եկամուտների ապահովման համար...»<sup>3</sup>: Ներկայումս ՀՀ գյուղատնտեսությունը հիմնարար նշանակություն ունի երկրի ՀՆԱ-ի ձևավորման գործընթացում, և այս հանգամանքն առավել նկատելի է

<sup>1</sup> Самуелсон П. Экономика, МГП. АЛГОН ВНИСИ 1992, Т.1, ст.166.

<sup>2</sup> Макконел К., Брю С. Экономикс, принципы, проблемы и политика, М. Республика, 1992г, ст.65.

<sup>3</sup> "Agribusiness and Agro-industry in Armenia" Andranik Petrosyan, "Enabling Environments for Agribusiness and Agro-industry Development in Eastern Europe and Central Asia" proceedings of FAO Workshop, Rome, Italy, 2006, p. 113.

դարձնում գյուղատնտեսության ոլորտի առևտրային կազմակերպությունների, ֆերմերային տնտեսությունների, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների ֆինանսական միջոցների բավարարման նպատակով տարաբնույթ վարկային ծրագրերի մշակման և դրանց կիրառման անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետության ներկայիս տնտեսությունը, մասնավորապես գյուղատնտեսությունը, ձևավորվել է քաղաքական ու տնտեսական կտրուկ փոփոխությունների առկայության պայմաններում, ինչը բնորոշ էր ետխորհրդային գրեթե բոլոր հանրապետություններին: Տնտեսության անցումային փուլն առանձնահատուկ իրավիճակ է, ինչը գիտական հետազոտության է ենթարկվել մի շարք գիտնականների կողմից և բնութագրվում է որպես նախկինում ձևավորված տնտեսական հարաբերությունների քայլայում և նորերի ձևավորում: Անցումային իրավիճակին բնորոշ է տնտեսական գործունեության հարաբերական կանոնակարգվածությունը: Պահանջին տնտեսությունից շուկայական տնտեսավարման նոր հարաբերություններին անցման փուլում անցումային տնտեսություն ունեցող երկրների առջև ծառանում են որպակապես նոր խնդիրներ, որոնցից հատկանշական է շուկայական պայմաններին բավարարող պետական քաղաքականության իրականացումը:

Հայաստանի Հանրապետությունն իր անկախացման առաջին իսկ օրվանից երկրի տնտեսության զարգացումը փոխեց ազատ շուկայական տնտեսավարման, ինչը հիմնված է մասնավոր սեփականության առկայության վրա: Եվ քանի որ պետությունը որդեգրեց ազատ շուկայական հարաբերությունները, ուստի անհրաժեշտ էլ նաև փոփոխության ենթարկել նախկին հասարակարգին բնորոշ տնտեսությունն իր բոլոր առկա ենթակառուցվածքներով: Նման փոփոխություններն իրականացվեցին բարեփոխումների միջոցով, որոնք կրում էին ինչպես քաղաքական և տնտեսական, այնպես էլ սոցիալական և մշակութային բնույթը:

Որպես անցումային փուլի օրինաչափություն, Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում բարեփոխումներն ի սկզբանե պատճառ դարձան տնտեսության անկման, սղաճի, գործազրկության ավելացման, բնակչության հիմնական մասի կենսամակարդակի կտրուկ իջեցման: Այնուամենայնիվ, Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում (Բուլղարիա, Լեհաստան, Հունգարիա, Չեխիա, Ռումինիա, Սլովակիա) մի քանի տարի անց բարեփոխումների արդյունավետությունը դրսերվեց տնտեսական աճով, ֆինանսական կայունացմամբ և ներդրումների ավելացմամբ: Մինչդեռ ԱՊՀ երկրների մեծ մասում տնտեսական բարեփոխումների արդյունավետության դրսերումները ուշ են ի հայտ գալիս, և բարեփոխումների հետագա խորացումը առաջնահերթ հիմնախնդիր է դառնում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բարեփոխումների առումով Հայաստանի վարկանիշային համեմատաբար գերադասելի ցուցանիշները չեն զուգակցվել ոլորտի տնտեսական արդյունավետության ցուցանիշների համարժեք աճով: Հիմնավորումը մեկն է բարեփոխումների արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն ազգարային ոլորտի խնդիրների լուծումով, այլև մակրոտնտեսական կայունացման և միկրոտնտեսական իրավիճակի տարբեր գործուներով<sup>1</sup>:

Պետության կողմից իրականացված բարեփոխումները մասամբ կանխեցին տնտեսության անկումը և հաստատեցին մակրոտնտեսական կայունություն, որն էլ հիմք հանդիսացավ գյուղատնտեսության վերակազմակերման ու հետագա զարգացման համար: Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությունում տնտեսական բարեփոխումներն իրականացվել են տնտեսության համար երկու խիստ տարրեր ժամանակահատվածներում.

1. 1990-1994 թվականներն ընկած այն ժամանակահատվածն է, որին հիմնականում բնորոշ են երկրի տնտեսության կտրուկ անկումը, ինչը հետևանք էր տարածաշրջանում հակամար-

<sup>1</sup> Հ. Սահմանադրություն, ՀՀ ազգարային ոլորտի արտադրական ենթակառուցվածքների ձևավորման հիմնախնդիրներն անցումային տնտեսության պայմաններում, Երևան 2005թ., էջ 8:

տուրյունների արդյունքում հիմնական տրանսպորտային ուղիների գործունեության խաթարման և Հայաստանի փաստացի շրջափակվածության, եներգետիկ ճգնաժամի, նախկինում ձևավորված տնտեսական կապերի խզման ու վարչող տնտեսական քաղաքականության բազմաթիվ սխալների և բացքողումների: Ինչպես հայտնի է, այս ժամանակահատվածում իրականացված եղողի արագ սեփականաշնորհումը, գների ազատականացումը, արտաքին առևտուրի և տնտեսական սահմանների բաց գործելակերպը, ազգային դրամի ներդրումն ու այլ անհրաժեշտ և պարտադրված գործընթացներն այնպիսի ազդեցություն ունեցան տնտեսության վրա, որոնց հետևանքներն առ այսօր, թերևս, որոշ չափով առկա են: Բարեփոխումների այս փուլում տնտեսության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ծավալը կրճատվեց 53 %-ով, և արձանագրվեց գերսղած:

2. 1994 թվականից սկսած՝ մասնակիորեն հաջողվեց կասեցնել երկրի տնտեսական անկումը և ապահովել մակրոտնտեսական որոշակի կայունություն: Այս ժամանակահատվածում արձանագրվեցին ՀՆԱ-ի որոշակի աճ և խիստ ցածր սղած: Այս փուլը կրում էր առավել համակարգված բնույթ, քիչ թե շատ ամբողջական տեսք ստացավ տնտեսավարման օրենսդրական դաշտը: 1995-97 թվականների ընթացքում խորացվեցին համակարգված տնտեսական բարեփոխումները, պետության տնտեսավարման գործառույթների կտրուկ նվազման պայմաններում ամբողջական տեսք ստացավ հարկաբյուջետային համակարգը, ընդհանվեց ու ամբողջացավ բանկային օրենսդրությունը, ընդունվեցին կամ նորացվեցին տնտեսական առանձին միավորումների գործունեությունը կարգավորող բազմաթիվ օրենքներ:

Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակի տվյալներից հստակ երևում է, որ ՀՆԱ-ն 1995 թվականից սկսած կայուն աճել է, ավելին՝ 2007 թվականին 2006-ի համեմատությամբ աճել է մոտ 44 %-ով անվանական և 43 %-ով մեկ շնչի հաշվով: Այս երկու ցուցանիշների համահունչ դինամիկան տրամաբանական է: ՀՆԱ-ի աճի տեսմանը վերը շարադրված բարեփոխումների երկրորդ փուլի ժամանակաշրջանից սկսած նույնպես կայուն աճել է: Համաձայն աղյուսակում բերված տվյալների՝ սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում մինչև 1995 թվականը արձանագրել է բարձր աճ, իսկ 1995-ից հետո, մասնավորապես վերջին երեք տարիներին, աչքի է ընկնում աննկատ աճով: ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը բնութագրող մյուս կարևորագույն ցուցանիշը՝ ՀՀ դրամի և ԱՍԴ դրամի փոխարժեքը, ներկայացված է աղյուսակի վերջին տողում: Այսուղեա հարկ ենք համարում նշել, որ 1993թ. նոյեմբեր ամսին (1993թ. նոյեմբերի 27-ից Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում ազգային արժույթը՝ դրամը, օրինական միակ վճարամիջոցն է) ԿԲ-ը շրջանառության մեջ դրեց ՀՀ ազգային դրամը՝ 1 դրամը = 200 ռուբլի կամ 1 ԱՍԴ դրամը = 14,5 դրամ փոխարժեքով և 1994թ. երկրում առաջին անգամ իրականացվեց դրամավարկային քաղաքականություն: Այդ տարիներին երկիրը հիպերինֆլացիոն շրջանում էր, և միայն երեք ամսում (1993թ. նոյեմբերի 22-ից 1994թ. փետրվարի 21-ը) դրամը արժեզրկվեց մոտ 16 անգամ (1 ԱՍԴ դրամը = 244.62 ՀՀ դրամ): Ըստ աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների՝ մինչև 2002 թվականը այս ցուցանիշն աճել է և հասել 573.3 ՀՀ դրամի 1 ԱՍԴ դրամի նկատմամբ, սակայն հետագայում այն նվազել է և 2007 թվականին կազմել է 342.1 ՀՀ դրամ 1 ԱՍԴ դրամի դիմաց:

ՀՀ մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները և փափոխությունները 1991-2006 թթ.<sup>1</sup>

Ցուցանիշներ	1991	1995	1999	2002	2006	2007	2007 թվականը 2006 թվականի նկատմամբ (+, -)	
							բացարձակ	հարաբերական %
Անվանական ՀՆԱ, մլն ԱՄՆ դոլար	-	1286.5	1907.1	2367.3	6386.7	9176.7	2790	43.68
ՀՆԱ-ի աճի տեմպ, %	88.3	106.9	103.3	112.9	113.7	113.7	0	0
ՀՆԱ մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	-	342.2	485.0	736.9	1982.8	2844.3	861.5	43.45
Սպառողական գների ինդեքսը	274.1	276.0	100.6	101.1	102.9	104.4	1.5	1.46
ՀՀ դրամի և ԱՄՆ դոլարի փոխարժեքը	-	405.9	524.1	573.3	416.0	342.1	-73.9	-17.76

Վարկային գործառնությունները տնտեսության բնականոն զարգացման ապահովման նախադրյալներից մեկն են: Վարկը շուկայական տնտեսության անխափան գործունեությունն ապահովելու տեսանկյունից կատարում է մի քանի գործառույթներ՝ վերաբաշխման, միջոցների շրջանառելության ապահովման, կապիտալի և արտադրության կենտրոնացման ու տնտեսության վարկային գործընթացի կարգավորման: Հարկ է նշել, որ վարկն անհրաժեշտ է գործող կազմակերպությունների միջոցների անընդհատ շրջանառության ապահովման, ապրանքների սպառման գործընթացի սպասարկման համար:

Վարկը կարող է նաև օգտագործել պետության կողմից որպես գործիք կապիտալ ներդրումների, բնակարանային շինարարության, ապրանքների ներմուծման խթանման, ինչպես նաև տնտեսության շահութաբեր ճյուղերի զարգացման համար: Վարկի կառավարման երաշխիքների և արտոնությունների տրամադրման միջոցով պետությունը խթանում է այն կազմակերպությունների ու ճյուղերի արտոնյալ վարկավորումը, որոնց գործունեությունը համապատասխանում է տնտեսության զարգացման նպատակային ծրագրերին<sup>3</sup>:

Գյուղատնտեսության վարկավորման հիմնական առանձնահատկությունները համապատասխանում են ճյուղին բնորոշ որոշ հատկանիշներին, որոնց ուսումնասիրությունը պարտադիր է յուրաքանչյուր պետության գյուղատնտեսության վարկավորման համապատասխան մեխանիզմի մշակման և կիրառման համար:

Գյուղատնտեսության հիմնական առանձնահատկությունը ճյուղի արտադրության սեզոնային բնույթն է: Տնտեսության այլ ոլորտներում նույն ժամանակահատվածում ներդրված կապիտալը կարող է մի քանի շրջապտույտ իրականացնել: Գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ կամ ֆերմերային տնտեսությունների եկամուտների ետ մնալը տնտեսության այլ ոլորտների համեմատ խորացնում է այդ հիմնախնդիրը, և սեզոնային ներդրումները հնարավոր է լինում իրականացնել գյուղատնտեսական ապրանք արտադրողների միջոցներով: Ազրարային ոլորտը, ի տարրերություն այլ ոլորտների, ենթարկվում է անկանխատեսելի բնակլիմայական

<sup>1</sup> Աղյուսը՝ ՀՀ առքատության հաղթահարման ուղղական ծրագիր, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալներ:

<sup>2</sup> 2002 թ.-ից հետո ցուցանիշների հաշվարկի հիմքում դրված է 2001թ. մարդահամարի արդյունքներով հաշվարկված բնակչության միջին տարեկան քանակը:

<sup>3</sup> Բ. Ասատրյան, Բանկային գործ, Երևան, 2004, էջ 245:

փոփոխությունների, բույսերի և կենդանիների առավել վտանգավոր հիվանդությունների, բնական աղետների: Բացի բերքի կորստից և շուկայում գների էական փոփոխությունից, ազդում է գրավի առարկայի արժեքի վրա, և արդյունքում այն օգալիորեն կորցնում է իր իրացվելիությունը տուժած տարածաշրջաններում: Նշված պատճառներով գյուղատնտեսության ոլորտը սովորաբար դուրս է մնում բանկային կառույցների ուշադրությունից, քանի որ փոքր հաճախորդների սպասարկման (տրանսակցիոն) ծախսերը երբեմն գերազանցում են բանկերի համար սպասվելիք հնարավոր եկամուտները: Գյուղատնտեսության ոլորտը ֆինանսավորող բանկերի գործունեության դժվարացման գործուներից է նաև այն, որ գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից վարկավորման միաժամանակյա պահանջարկի առաջացումը հատկապես բնորոշ է բուսաբուծական նթերքներ արտադրողների համար:

Գյուղատնտեսության վարկավորման հիմնախնդիրը ծառացած է յուրաքանչյուր երկրի պետական տնտեսական քաղաքականության և տնտեսությունում առկա առևտրային բանկերի առջև, որի լուծումը պահանջում է վերը նշվածների համատեղ ջանքերի արդյունքում տվյալ երկրի տնտեսական զարգացման ուղղաձությանը և մակարդակին, բնակչիմայական պայմաններին և ազգային առանձնահատկություններին ու հոգեկերտվածքին բնորոշ գյուղատնտեսության վարկավորման հստակ մեխանիզմի մշակում և կիրառում:

Յուրաքանչյուր երկիր, կախված իր տնտեսական զարգացման աստիճանից և ուղղվածությունից, գյուղատնտեսական ձեռնարկությունների ֆինանսավորումն իրականացնում է առանձնահատուկ ձևով: Արտասահմանյան միշտ շարք զարգացած երկրների գյուղատնտեսության վարկավորման ուսումնասիրությունները հստակ մատնանշում են, որ ազատ շուկայական տնտեսավարման պայմաններում իդեալական է համարվում կրոպերատիվ համագործակցության միջոցով գյուղատնտեսության վարկավորումը: Ազգարային արտադրությունը համարվում է ցանկացած երկրի տնտեսության ռազմավարական նշանակության ոլորտ, սակայն այստեղ վարկային ներդրումների ոիսկայնության աստիճանը բարձր է, և միջոցները դանդաղ են շրջանառվում, ինչի հետևանքով այս ոլորտը գուտ առևտրային տեսանկյունից քիչ գրավիչ է: Ընդհանրապես միջազգային բանկային պրակտիկայում գյուղատնտեսական վարկերը դասվում են ամենաբարձր ոիսկային վարկերի շարքում, որի պատճառով բանկերի մեծամասնությունը ձեռնապահ է մնում գյուղատնտեսության վարկավորումից: Սովորաբար զարգացած երկրներում գործում են հատուկ ազգարային ոլորտը վարկավորող բանկեր, վարկային կազմակերպություններ և մասնավորապես վարկային կրոպերացիաներ:

Շուկայական տնտեսավարման պայմաններում վարկավորումը ձեռք է բերում առավել մեծ նշանակություն: Սա պայմանավորված է հիմնականում նրանով, որ գյուղատնտեսական ապրանքարտադրողները ինքնուրույն են տնօրինում իրենց տրամադրության տակ եղած ուսուրաները և դրանց բացակայության կամ չբավարարելու դեպքում արտադրության գործընթացի անընդհատությունը պահպանելու համար դիմում են վարկային միջոցների: Ինչևէ, բոլոր երկրներում գյուղատնտեսության վարկավորումն իրականացվում է մի շարք առանձնահատկություններով: Այս փաստը հիմնականում բացատրվում է նրանով, որ գյուղատնտեսության արտադրության գործընթացն ունի մի շարք յուրահատկություններ:

Արտադրության գործընթացում բոլոր միջոցներն անցնում են 3 փուլ.

1. միջոցների ձեռքբերում (մատակարարում),
2. արտադրություն,
3. արտադրանքի իրացում:

Թվարկված բոլոր փուլերում շրջանառվող միջոցները պետք է լինեն այնքան, որպեսզի ապահովեն տնտեսավարման անընդհատ և հաջող ընթացքը: Առաջին փուլում գյուղատնտեսական ապրանքներ արտադրողների կողմից դրամական ուսուրաները ծախսվում են հումք, վառելիք, պահեստամասեր, սերմնանյութեր, պարարտանյութեր և արտադրության համար այլ

անհրաժեշտ նյութական ռեսուրսներ գնելու համար: Վերջիններս մասնակցում են արտադրության գործընթացին, որտեղ էլ ոչ ընթացիկ ակտիվների (հիմնական միջոցների) և աշխատուժի միջոցով վերածվում են իրացման ենթակա ապրանքների: Բուսաբուծական կամ անասնաբուծական արտադրանք ստանալու համար պահանջվում են մի քանի ամիսներ, երեսմն տարիներ, այսինքն շրջանառության երկրորդ փուլում շրջանառվող միջոցների ժամանակահատվածը կախված է բնատնտեսական պայմաններից: Այսպես, բուսաբուծությունում նկատվում է ծախսերի աճման կտրուկ անհամաշափություն, որոնք չեն ծածկվում (փոխհատուցվում) արտադրանքի ելքով (ծախսերն ավելանում են առաջին կիսամյակում և նվազում՝ երկրորդում): Անասնաբուծությունում արտադրության գործընթացն ավելի քիչ է կախված եղանակային պայմաններից:

Ծախսերի և արտադրության ելքի վրա սեղոնային տատանումները որոշիչ ազդեցություն են բողնում նաև դրամաշրջանառության վրա<sup>1</sup>: Արտադրանքի իրացումից հասույթը ստացվում է անհամաշափ, ընդ որում ամենաքիչ դրամական մուտքերն արձանագրվում են ամենաշատ ծախսերի իրականացման ժամանակահատվածում:

Գիտականորեն հիմնավորված է, որ ազրարային կազմակերպություններում սեփական ոչ ընթացիկ ակտիվները նվազագույն չափերի են լինում, իսկ փոխառու միջոցները ուղղվում են սեղոնային պահուստների ստեղծմանը և ծախսերի ծածկմանը, ինչի ժամանակին կատարումը վերացնում է արտադրության դադարեցման կամ դանդաղեցման վտանգը, որը կարող է ի հայտ գալ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար անհրաժեշտ դրամական միջոցների բացակայության պատճառով: Նման իրավիճակում վարկը համարվում է հզոր տնտեսական լծակ և արտադրության համար անհրաժեշտ միջոցների ձևավորման հիմնական աղբյուր, որի միջոցով պահպանվում է արտադրության շրջանառության անընդհատությունը: Շուկայական տնտեսավարման անցումային պայմաններում կարճաժամկետ վարկավորման ձևերն ու մեթոդները պետք է առավելագույն չափերով հաշվի առնեն գյուղատնտեսության արտադրության միջոցների շրջանառության առանձնահատկությունները:

Նախկին Խորհրդային Սիության տնտեսության մի մասը կազմող Հայաստանի գյուղատնտեսությունում մինչև վերափոխումները շուկայական վարկ հասկացությունը բացակայում էր: Գյուղատնտեսական ձեռնարկություններին տրամադրվող վարկերը (փոխառությունները) առևտրային բնույթ չին կրում: Վարկի չափերը որոշելու համար տնտեսությունները բանկերին ներկայացնում էին եռամսյակային կտրվածքով կարճաժամկետ վարկային միջոցների նկատմամբ պահանջի տարեկան հաշվարկ, որը կախված էր պլանային ծախսերից, արտադրանքի ելքից և մնացած վարկավորման ենթակա ապրանքանյութական արժեքներից: Իհարկե, վարկատու և վարկառու փոխհարաբերությունների նման մեխանիզմը բնորոշ է կենտրոնացված պլանային տնտեսական գարգացում ունեցող պետություններին:

Ընդհանրապես, նման պետություններում առհասարակ տնտեսության այս կամ այն ճյուղերի վարկավորման կամ ֆինանսավորման հարցում անմիջական միջամտություն ունի պետությունը: Գյուղատնտեսության ֆինանսավորման հարցում նույնպես կիրառվում է այս քաղաքականությունը: Օրինակ, Չինաստանի բանկային համակարգում տեղ գտած «քաղաքական» բանկերը մասնագիտացված բանկեր են, որոնք դրամական միջոցներ են տրամադրում պետական տնտեսական քաղաքականության իրականացման համար: Այս բանկերը երեքն են, որոնցից մեկը կոչվում է «Չինաստանի գյուղատնտեսության զարգացման բանկ»<sup>2</sup>:

Բնականաբար նախկին Խորհրդային Սիությունում, որի մի մասն է կազմել ներկայիս ՀՀ տարածքը, կիրառվել են այս սկզբունքները: ԽՍՀՄ գյուղատնտեսության վարկավորումը սկսվել է 1921 թվականին ՌՍՖՍՀ Պետրանկի հիմնադրմամբ: Ակզրնական փուլում գյուղատնտեսական բանկի ենթակայությամբ գործել է հիմնականում տեղական վարկային փոխառության

<sup>1</sup> М. Л. Лишанский “Краткосрочное кредитование сельскохозяйственных предприятий”, Москва 2004, стр. 69.  
<sup>2</sup> “Комерция в Китае”, Межконтинентальное издательство Китая, Пекин 2004, стр. 43.

խնայողական մարզային ու նահանգային ընկերությունների միջոցով գյուղատնտեսության վարկավորման կոռապերատիվ համակարգ: Այսուղ կարևոր է փաստել այն, որ այդ տնտեսական համակարգի պայմաններում խիստ տարանջատվել են ըստ ժամկետայնության գյուղատնտեսության վարկավորումն իրականացնող բանկերը, այսինքն՝ երկարաժամկետ վարկավորումն իրականացրել է ԽՍՀՄ Գյուղաճները, իսկ կարճաժամկետը՝ ԽՍՀՄ Պետրանելը: 1959 թվականին ԽՍՀՄ Գյուղաճները վերացվել են, և գյուղատնտեսության վարկավորման գործառնություններն սկսել են կատարել ԽՍՀՄ Պետրանելը: ՀՀ-ում գյուղատնտեսությունը՝ ԽՍՀՄ տնտեսության ռազմավարական ճյուղերից մեկը, վարկավորվում էր վերը նշված բանկի կողմից:

ՀՀ անկախացումից առ այսօր ձևավորված բանկային համակարգը և դրան առընթեր, վարկային շուկան արմատապես տարրերվում է նախկին համակարգից: Այսօր ՀՀ գյուղատնտեսության վարկային շուկայի առաջարկը ներկայացնող կողմը առևտրային բանկերն են և վարկային ծրագրեր իրականացնող տարրեր միջազգային կազմակերպությունները, իսկ վարկային միջոցների նկատմամբ պահանջ ունեն գյուղացիական ու գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները, վերամշակող արտադրական կազմակերպությունները և այլն: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի վարկավորման ծավալների և դրանց փոփոխության միտումների վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

## Աղյուսակ 2

### ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր և գյուղատնտեսության ոլորտի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության (տարեվերջին) 2001-2006 թթ.<sup>1</sup>

Ցուցանիշներ	2001	2002	2003	2004	2005	2006
Ընդամենը տրամադրված վարկեր (մլն դրամ)	87700	83667	100757	137134	191209	228083
Գյուղատնտեսության ոլորտում տրամադրված վարկեր (մլն դրամ)	9862	7787	8152	8611	11307	14196
Գյուղատնտեսության ոլորտին տրամադրված վարկերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %	11.2	9.3	8.1	6.3	5.9	6.2
Գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում, %	25.0	23.6	21.5	22.5	18.7	17.7
Ազրոպարենային համակարգի մասնաբաժինը ՀՆԱ-ում, %	32.8	32.8	29.5	29.2	24.3	22.5

Ինչպես երևում է աղյուսակից, գյուղատնտեսության ոլորտին տրամադրված վարկերի դիմամիկան համահունչ է ընդհանուր տնտեսությանը տրամադրված վարկերի դիմամիկային, այսինքն՝ 2001 թվականի համեմատ 2002 թվականին արձանագրվել է անկում, իսկ ահա 2003 թվականից սկսած վարկերը կայուն աճել են և 2006 թվականին հասել 228083 մլն դրամի՝ ընդհանուր տնտեսությանը տրամադրված և 14196 մլն դրամի՝ գյուղատնտեսությանը տրամադրված: Իսկ ահա գյուղատնտեսության ոլորտին տրամադրված վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր տնտեսությանը տրամադրված վարկերի մեջ անկում է արձանագրել, այսպես՝ եթե 2001 թվականին գյուղատնտեսական վարկերը կազմել են ընդհանուր տնտեսությանը տրամադրված վարկերի 11.2 %-ը, ապա մինչև 2005 թվականը յուրաքանչյուր տարի, միջինը 1.4 տոկոսային կետով նվազելով, կազմել են 5.9 % և միայն հետո աճել ու 2006 թվականին հասել են

<sup>1</sup> ա) «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն», ՀՀ ԱՎԾ, Երևան 2006 թ., էջ 75-76:

բ) «ՀՀ սոցիալ-տնտեսական իրավիճակը 2001-2006թթ. հունվար-դեկտեմբերին», ՀՀ ԱՎԾ տեղեկատվական գեկույցներ, Երևան 2002-2007թթ.:

6.2%-ի: Աղյուսակում ներկայացված մյուս երկու ցուցանիշները՝ ՀՆԱ-ում գյուղատնտեսության ու ազրոպարենային համակարգի մասնաբաժինները, կանոնավոր կերպով նվազել են, և եթե 2001 թվականին ՀՆԱ-ում գյուղատնտեսության ու ազրոպարենային համակարգի մասնաբաժինները համապատասխանաբար կազմել են 25.0 և 32.8 %, ապա 2006-ին՝ 17.7 և 22.5 %:

Ներկայիս պայմաններում ՀՀ բանկային համակարգի զարգացումը պահանջում է ինչպես արտասահմանային երկրների զարգացած բանկային համակարգերի և առհասարակ բանկային գործունեության (Կենտրոնական բանկ և առևտրային բանկեր) փորձի անընդհատ ուսումնասիրություն, այնպես էլ մեր կողմից արդեն կուտակված փորձի մանրակրկիտ ուսումնասիրություն, որի արդյունքում հնարավոր կլինի ՀՀ բանկային օրենսդրությունը համապատասխանեցնել համաշխարհային զարգացումներին և տնտեսապես ինտեգրվել տարբեր միջազգային կազմակերպությունների:

## ԶԱՎԵՏ ՍԱՐԳԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Քորանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

### ՅԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հարկ հասկացության արմատները մեզ տանում են դարերի խորքը և արտահայտում են այդ կարևոր երևույթի ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական ու քաղաքական օրինաչափությունները:

Ժամանակի հետ հասարակության մեջ պահանջմունք առաջացավ տեսագիտական հիմքերի վրա փոխադրելու հարկագումանը: Եվ պատահական չէ, որ գրեթե բոլոր տնտեսագիտական դպրոցները անդրադարձել են հարկման խնդրին: Անժխտելի է, որ հարկերն իրենց գոյության սկզբից ել եղել են դասակարգային շահերի, սոցիալական տարբեր խավերի պայքարի ամենավառ դրսևորումներից մեկը, սակայն ոչ մի տնտեսագիտական դպրոց չի ժխտում հարկերի դերը պետության գոյատևման գործում: Չնայած հարկային քաղաքականության վերաբերյալ նրանց տարբեր մոտեցումներին՝ այնուամենայնիվ, բոլոր տնտեսագետների մոտ ամենավիճակարույց հարցերից մեկը հարկերի արդարացի գանձման հիմնախնդիրն է:

19-րդ դարի երկրորդ կեսին շատ պետություններ սկսեցին գիտական ձեռքբերումները, նորամուծությունները լայնորեն կիրառել գործնական կյանքում: Սակայն, ինչպես նշում է ոռու տեսաբան Վ. Պուշկարևան. «Ֆինանսական գիտության գագաթնակետը Առաջին համաշխարհային պատերազմից հետո իրականացված հարկային բարեփոխումներն էին, որոնք ամրողացրեցին հիմնավորված էին հարկման գիտական սկզբունքներով: Եվ հենց այս ժամանակ դրվեցին ժամանակակից հարկային համակարգի կառուցվածքային հիմքերը, որում ուղղակի հարկերը և առաջին հերթին՝ պրոգրեսիվ եկամտահարկը, զբաղեցրին առաջատար դիրք»<sup>1</sup>:

Հայտնի են հարկման մասին ընդհանուր և մասնավոր տարբեր տեսություններ: Ընդհանուր տեսություններն անդրադառնում են հարկերի դերին և տեղին հասարակության կյանքում, հարկման համընդհանուր նշանակությանը, հարկման ազդեցությանը տնտեսության, նրա առանձին ճյուղերի վրա, իսկ հարկման մասնավոր տեսությունները ներառում են գիտական հայացքներ հարկման մեխանիզմների, հարկային համակարգի առանձին տարբերի վերլուծության, նրանց փոխհարաբերակցության և այլնի վերաբերյալ: Այժմ համառոտ անդրադառնոր այս տեսություններից մի քանիսին:

<sup>1</sup> Пушкирева В. "История финансовой мысли и политика налогов". Москва 1996г., стр.74.